ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2026 թվականի № 191-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի փետրվարի 12-ի № 152-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի՝ **որոշում եմ.**

1. Ձևավորել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների ռեեստր:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների ռեեստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանում սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի *անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությունը*:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների ռեեստրի վարման համար պատասխանատու անձ *(ռեեստր վարող)* սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության ավագ մասնագետ *(ծածկագիր՝ 96-31.2-Մ3-2) Ստեփան Ասատրյանին*:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի մայիսի 19
ք. Հրազդան